ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. առաջին նախադասության «11-րդ և 21-րդ» բառերը փոխարինել «10-րդ, 14-րդ և 15-րդ» բառերով,

բ. երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասի աղյուսակի 1-ին, 2-րդ, 10-րդ, 14-րդ և 15-րդ տողերով նախատեսված ծածկագրերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերով.»,

գ. աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՀՀ	Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ)		
				2024 թվականի հունվարի 1-ից	2025 թվականի հունվարի 1-ից	2026 թվականի հունվարի 1-ից
1.	2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	6300	6900	7600
2.	2208 (բացառությամբ 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0 2208 20 2208 30 2208 40)	սպիրտային խմիչքներ	1 լիտր	3800	4200	4600
3.	2208 90 330 0	պտուղներից և	1 լիտր	900		

	2208 90 380 0 2208 90 480 0	(կամ) հատապտուղների պատրաստված օղի				
4.	2208 20	կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3300 բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3800 գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6500 դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9300 ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 15300 զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 24000		
5.	2208 30 2208 40	վիսկի, ռոմ և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր	8000		
6.	2203 00	գարեջուր	1 լիտր	150		
7.	2204	խաղողի գինի	1 լիտր	165		
8.	2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ	1 լիտր	1100		
9.	2206 00	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	165		
10.	2402 (բացառությամբ 2402 10 000 01 2402 90 000 01 2402 10 000 02 2402 90 000 02)	ծխախոտի արտադրանք	1000 հատ	16100	17700	19500
11.	2402 10 000 01 2402 90 000 01	սիգար	1000 հատ	660000		

12.	2402 10 000 02 2402 90 000 02	սիգարելա	1000 հատ	18000		
13.	2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	1640		
14.	2404 11 000 9	ծխախոտի արտադրանք	1000 հատ	3400	3750	4150
15.	2404 12 000 0 2404 19 000	ծխախոտի արտադրանք	1 միլիլիտր	65	80	100
16.	2710 19 710 0 - 2710 19 980 0 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0	քսայուղ	1 կգ	550		
17.	2710 12	բենզին	1 տոննա	43600		
18.	2710 (բացառությամբ 2710 12 2710 19 710 0 - 2710 19 980 0)	դիզելային վառելիք	1 տոննա	14200		
19.	2709 00	հում նավթ, նավթամթերքներ	1 տոննա	29450		
20.	2711 (բացառությամբ 2711 11 000 0 2711 21 000 0)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ	1 տոննա	1100		
21.	2711 21 000 0	սեղմված բնական գազ	1 տոննա	37100		

2) 2-րդ մասի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	2024 թվականի հունվարի 1-ից	2025 թվականի հունվարի 1-ից	2026 թվականի հունվարի 1-ից
Ակցիզային հարկի հաշվարկման գործակից	1.08	1.16	1.24

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).** Նախագծերի նպատակը ակցիզային հարկով հարկվող ապրանքատեսակների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերի վերանայումը, ինչպես նաև ծխախոտի արտադրանքը առավելագույն մանրածախ գնից բարձր գնով օտարելու դեպքերի համար վարչական տուգանքի սահմանումն է:

2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ակցիզային հարկի համակարգը, այդ թվում՝ դրույքաչափերը վերջին անգամ վերանայվել է 2019 թվականին ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով: Ընդ որում, նշյալ փոփոխություններով, մասնավորապես՝

- 2020 թվականի հունվարի 1-ից վերացվել են ակցիզային հարկի տոկոսային դրույքաչա-փերը և սահմանվել են նոր՝ հաստատուն դրույքաչափեր՝ հիմնված արդյունավետ դրույքաչափերի հաշվարկային մեծությունների վրա,
- բարձրացվել են ակցիզային հարկի դրույքաչափերը: Մասնավորապես, 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ը յուրաքանչյուր տարի էթիլային սպիրտի և սպիրտային խմիչքների ակցիզային հարկի դրույքաչափերը բարձրացվել են 30 տոկոսով, իսկ IQOS ծխախոտի և ծխախոտի արտադրանքի ակցիզային հարկի դրույքաչափերը՝ 15 տոկոսով: Ակցիզային հարկով հարկման ենթակա այլ ապրանքների համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը բարձրացվել են տարեկան 3 տոկոսով: Արդյունքում նաև ներդրվել է ակցիզային հարկի դրույքաչափերը յուրաքանչյուր տարի ճշգրտելու (3 տոկոսով բարձրացնելու) համակարգ, որով կարգավորվել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների գների աճով պայմանավորված՝ դրույքաչափերի աճ ապահովելու հարցը:

Նշյալ փոփոխությունները բխում էին Կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության ուղղություններից, մասնավորապես, ուղղակի հարկերի գծով հարկային բեռը նվազեցնելու և այն որոշակիորեն անուղղակի հարկերի վրա տեղափոխելու ուղղությունից, ինչպես նաև ակցիզային հարկի համակարգի կիրառության ընթացքում առաջացած խնդիրների կարգավորմամբ:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է տոկոսային և հաստատուն դրույքաչափերի միաժամանակյա կիրառության ընթացքում առաջացած խնդիրներին:

Խնդիրն այն է, որ 2020 թվականի հունվարի 1-ից գործող՝ չորս տարիների համար սահմանված՝ ակցիզային հարկերի դրույքաչափերը յուրաքանչյուր տարի վերանայելու ժամանակահատվածը լրանում է 2023 թվականի դեկտեմբերի 31-ին: Մյուս կողմից, 2019 թվականին այդ պահին առկա ցուցանիշների հիման վրա սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը 2020 թվականից ի վեր չեն վերանայվել, մինչդեռ այդ ընթացքում այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են ապրանքների գները, էականորեն փոխվել են: Արդյունքում որոշ ապրանքների մասով ներկայումս սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը դեռևս զիջում են համադրելի երկրներում կիրառվող դրույքաչափերին և հնարավորություն չեն տալիս ապահովել ակցիզային հարկով համարժեք հարկում: Մասնավորապես՝

1) անցած 4 տարիների ընթացքում աճել են որոշ ենթաակցիզային ապրանքների գները և անհրաժեշտություն է առաջացել վերանայել գների աճով պայմանավորված ակցիզային հարկի դրույքաչափերի ինդեքսավորման գործակիցները,

2) անհրաժեշտ է ծխախոտի արտադրանքի համար սահմանել ակցիզային հարկի այնպիսի դրույքաչափեր, որպեսզի դրանք համահունչ և համադրելի լինեն ԵՏՄ անդամ մյուս պետություններում սահմանված դրույքաչափերին և առհասարակ միության շրջանակներում այս ապրանքատեսակի մասով իրականացվող միասնական հարկային քաղաքականության ընդհանուր տրամաբանությանը: Մասնավորապես, ինչպես հայտնի է, Եվրասիական տնտեսական միության հարկային քաղաքականության և վարչարարության ոլորտներում համագործակցության շրջանակներում իրականացվում է զգայուն ապրանքների ակցիզային հարկերի դրույքաչափերի ներդաշնակեցման քաղաքականություն, ինչը ենթադրում է որոշ ապրանքների մասով անդամ պետություններում կիրառվող ակցիզային հարկի դրույքաչափերի մոտարկում:

ԵԱՏՄ անդամ երկրների ծխախոտային արտադրանքի դրույքաչափերը ներկայացված են ստորև:

Երկիր	Ծխախոտային արտադրանքի ակցիզային հարկի դրույքաչափը 1000 հատի հաշվարկով			
	2023թ. (ՀՀ դրամ)	2023թ. (Եվրո)	2024թ. (կանխա-տեսում, ՀՀ դրամ)	2024թ. (կանխա-տեսում Եվրո)
Հայաստանի Հանրապետություն	14 640	34	16 100	39

Ռուսաստանի Դաշնություն	20 802	48	21 636	51
Ղազախստանի Հանրապետություն	12 126	28	14 310	33
Բելառուսի Հանրապետություն	23 063	53	31 066	73
Ղրղզստանի Հանրապետություն	10 373	24	11 514	27

Ակցիզային հարկի դրույքաչափերի մոտարկումը կարևորվում է այն հանգամանքով, որ այն ուղղված է ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական շահերի պաշտպանությանը, մասնավորապես՝ ծխախոտային արտադրանքի ապօրինի շրջանառության կանխմանը:

Հարևան երկրներում ծխախոտային արտադարանքի ակցիզային հարկի դրույքաչափերը ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Երկիր	Ծխախոտի ակցիզային հարկի դրույքաչափը ազգային արժույթով	Ծխախոտի ակցիզային հարկի դրույքաչափը 1000 հատի հաշվարկով (ՀՀ դրամ)
	2023թ.	2023թ.
Ադրբեջան	35 մանաթ 1000 հատի համար	8 125
Վրաստան	1.7 լարի 20 հատի համար գումարած մանրածախ գնի 30 տոկոսը	12 610*
Իրան ներմուծված	5000000 Ռիալ 1000 հատի համար	46 500
Իրան տեղական	2500000 Ռիալ 1000 հատի համար	32 315
Թուրքիա	15800 լիրա 1000 հատի համար	31 000

*հաշվարկը կատարվել է առանց մանրածախ գնի հաշվարկման, իսկ այդ պարագայում դրույքաչափը կկազմի մոտ 26,520 դրամ, ընդ որում՝ մեկ տուփ ծխախոտի գնի մեջ հարկերը պետք է պակաս չլինեն 60 տոկոսից:

Հարևան և ԵԱՏՄ երկրներում էթիլային սպիրտի, օղու և էլեկտրոնային ծխախոտի ակցիզային հարկի դրույքաչափերը ներկայացված են ստորև:

	էլ. ծխախոոտ 1 մլ համար (ՀՀ դրամ)	էթիլային սպիրտի ակցիզային հարկի դրույքաչափը 1 լիտրի համար (100 % սպիրտի վերահաշվարկով) (ՀՀ դրամ)	Սպիրտային խմիչքների (օղի) ակցիզային հարկի դրույքաչափը 1 լիտրի համար (ՀՀ դրամ),
ԵԱՏՄ երկրներ			
ՀՀ	55	5 700	3 430
Ռուսաստան	108	3 678	3 678

Ղազախստան	46	516	920
Բելառուսիա	121	1 060	1 060
Ղրղզստան	60	1 613	1 383
Հարևան երկրներ			
Վրաստան	29,7	1 284	900
Ադրբեջան	23,2	928	929
Թուրքիա		21 670	

3) Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով վարչական պատասխանատվություն է նախատեսված միայն օրենսդրությամբ սահմանված նվազագույն գնից ցածր գնով ապրանքների օտարման դեպքերի համար, իսկ ծխախոտի առավելագույն մանրածախ գնից բարձր գնով ապրանքների օտարման դեպքերի համար վարչական պատասխանատվություն նախատեսված չէ:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է՝

1) վերանայել ակցիզային հարկով հարկվող ապրանքատեսակների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը: Մասնավորապես՝

- անցած տարիների ընթացքում տեղի ունեցած գների աճով պայմանավորված՝ որոշակիորեն ինդեքսավորել ենթաակցիզային ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերը՝ ինդեքսավորումը յուրաքանչյուր տարվա համար սահմանելով 8 տոկոս.
- ծխախոտային արտադրանքի դրույքաչափերը բարձրացնել յուրաքանչյուր տարի 10 տոկոսով, էլեկտրական ծխախոտների դեպքում 18 և ավել տոկոսով,
- օղու և էթիլային սպիրտի ակցիզային հարկի դրույքաչափերը յուրաքանչյուր տարի բարձրացնել 10 տոկոսով,

2) Վարչական պատասխանատվություն նախատեսել ծխախոտի առավելագույն մանրածախ գնից բարձր գնով ծխախոտի արտադրանք վաճառելու դեպքերի համար:

4. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան ակցիզային հարկով հարկվող ապրանքների դրույքաչափերի վերանայումն է:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

6. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է վերանայել ակցիզային հարկով հարկվող ապրանքների դրույքաչափերը:

Միաժամանակ, նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի պահանջում:

7. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 6.8-րդ «Հարկաբյուջետային քաղաքականություն» մասով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝

- Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակը պետական ֆինանսական համակարգի բարձր արդյունավետությունն է: Դրան հասնելու նպատակով Կառավարությունը շարունակելու է հարկային քաղաքականության այնպիսի բարեփոխումներ, որոնք նպաստելու են բիզնես միջավայրի մրցունակության բարձրացմանը և միաժամանակ պետական բյուջեով սահմանված հարկային եկամուտների ապահովմանը:
- Կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է լինելու տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում չի նախատեսվում: